

**Խորհրդանիշների առկայությունը
Էռնեստ Հեմինգուեյի «Օերունին և ծովը» վիպակում
(գուգադրա-հայեցական քննություն)**

Նինա Ջադինյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-59>

Հանգուցային բառեր. *արտահայտչամիջոց, «այսբերգյան տեսություն», հեղինակի անհատական ոճ, թարգմանական համարժեքություն, ձկնորս, բնություն, մեռյան, շնածուկ*

Նախաբան

20-րդ դարի ամերիկյան գրականության դասական, Նոբելյան մրցանակակիր Էռնեստ Միլլեր Հեմինգուեյը հայտնի է աշխարհին որպես բազմաժանր իրապաշտ գրող, որի գրչին բնորոշ է հակիրճ, թվացյալ պարզ, բայց և խոր բովանդակային ոճ՝ նվազագույն (մինիմալիստական) ձևակերպով, այն է՝ արտահայտչամիջոցների հակիրճություն և հորինվածքի հստակություն: Հեղինակի լեզուն բնական է՝ ժողովրդախոսականին հարազատ, գրական ասելիքը խորիմաստ՝ հենված իր ստեղծած «Այսբերգյան կամ բացթողնման» տեսություն-սկզբունքի վրա, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ տեքստ-ենթատեքստ հարաբերակցություն: Այն ամբողջությամբ արտացոլում է գրողի անհատական մոտեցումը գեղարվեստական տեքստի ասելիքին: Այս գրական, ինչու՜ չէ, նաև հոգեբանափիլիսոփայական սկզբունքը հանգում է նրան, որ գեղարվեստական խոսքը առանձնապես կարիք չունի մանրամասների, քանզի ըստ այդ մոտեցման՝ գրագետ ընթերցողը կարող է ընկալել ասելիքի խորքը, և, բնականաբար, տեղի կունենա հեղինակ-ընթերցող յուրովի հաղորդակցություն: «Օերունին և ծովը» վիպակը է. Հեմինգուեյի ինքնատիպ մտածողության և խորագին գրի արգասիքն է՝ լի պատկերավորման միջոցներով, առանձնապես ուշադրության արժանի խորհրդանիշներով: Մեր խնդրո առարկան և սևեռման նյութը բացառապես հիշյալ գործում սփռված խորհրդանիշների քննությունն է՝ համեմված բնագրից կատարված թարգմանություն-մեկնությամբ:

Հայտնի է, որ խորհրդանիշները՝ որպես արտահայտման միջոցներ, առարկայական պատկերներ են, որոնք հաճախ գործադրվում են ստեղծագործություններում՝ առավել խորքային դարձնելու հեղինակային ասելիքը: Դրանք տարբեր գրական ժանրերում ակնհայտորեն յուրօրինակ հնչեղություն և արտահայտչականություն են հաղորդում բառանյութ-պատկերին: Կարելի է դրանք աներկբայորեն դիտարկել նաև գրական ստեղծագործության ենթատեքստ-համատեքստային ծիրում: Խորհրդանիշները բավականաչափ տեղ են գրավում Էռնեստ Հեմինգուեյի ոչ միայն վեպերում, այլև կարճ պատմվածքներում և, մասնավորապես, «Օերունին և ծովը» վիպակում: Վերջինս առատ է բնություն և կենդանիներ խորհրդանշող պատկերներով, այն է՝ մի դեպքում ծով և ծերունի, օգնական տղա, ձկներ, շնածկներ, մյուս դեպքում՝ առյուծներ ու նաև ծագող արև, կայծկլտուն գիշերային լուսատուներ՝ աստղեր, քամի և այլն: Յուրաքանչյուր ընտրված խորհրդանիշ նրանում ունի կենսական որևէ հստակ նշանակություն: Այս պատումի մեջ նման գրական միջոցների առկայությունը խոսում վկայություն է գրողի գեղագիտական բարձր ճաշակի և պատկերաստեղծման առանձնակի տաղանդի: Մեր հետազոտությունը դիտարկվում է որպես համեմատական կարագրա-ներհայեցական քննություն՝ հենված բնագիր տեքստի և թարգմանվածքի վրա:

Մինչ բուն վերլուծական նյութին անցնելը հարկ ենք համարում որոշ պտույտ կատարել խորհրդանիշների գրական տարածքում: Գրականության մեջ խորհրդանիշները

կարելի է բաժանել չորս հիմնական խմբի՝ 1) ընդհանրական կամ համընդհանուր, որոնք առնչվում են նախատիպերին, 2) մշակութային, որոնք հենվում են տվյալ լեզվամշակույթին, 3) անհատական՝ սովորաբար մեկնվում են գրողական տեքստի ենթատեքստի միջոցով, 4) հուզական՝ պայմանավորված գրական մասնավոր կերպարի հոգեվիճակով: Վերջին տեսակի խորհրդանիշը օգտագործվում է տեքստի գրական հերոսների հույզերի աստիճանական ընթացքը պատկերելու ակնհայտ միտումով: Խորհրդանիշը, անշուշտ, օգնում է ընթերցողին խորհելու և միաժամանակ խորությամբ մեկնելու հեղինակային միտքը ինքնուրույն կերպով: Մա վերաբերում է ոչ միայն բնագիր տեքստի ընթերցողին, այլև թարգմանաբար մատուցված նյութի հասցեատիրոջը: Եվ բնավ պատահական չէ, որ խորհրդանիշները՝ որպես հաղորդակցության անկապտելի արտահայտչամիջոց-բաղադրիչ, սովորաբար նաև նպաստում են գրական տեքստի առավել խոր ընկալմանը: Մեր խնդրո առարկա վիպակի մեջ հանդիպում ենք մի շարք խորհրդանիշների, որոնք, անկասկած, առանձնակի կարևորություն, վիպական իմաստ ու նաև պատկերավորման ուրույն արժեք ունեն: Այսպես՝ ծերունի ձկնորսի կերպարը զուգահեռվում է Քրիստոսի տառապանքի հետ, իսկ նրա օգնական տղան ասես հանդես է գալիս որպես առաքյալ: Այս երկուսի կրոնական ընկալումը ևս կարելի է դիտարկել խորհրդանշանի բիբլիական ներկայություն: Այժմ դիտարկենք վիպակի հնարավոր բոլոր խորհրդանիշները առանձին-առանձին՝ թարգմանական զուգահեռմամբ:

Պատումի ողջ տարածքում սփռված ծովը խորհրդանիշ է անհուն տիեզերքի: Ծովը և տիեզերքը ծնում են բազում կենդանի արարածներ, արևը խորհրդանշում է երջանկություն, այն բարի լուր է ավետում ծերունի ձկնորսին ասելով, որ եղանակը նրան կօգնի դիմակայելու ցանկացած դժվարության: Ծովը ծերունու հոգում կնոջական-զգայական պատկեր ունի, և պատահական չէ, որ նրան կոչում է ոչ թե *el mar*, ինչպես ընդունված է, այլ *la mar*, որի մեջ իր ողջ սերն է պարփակված: Այսպես օրինակ. “They spoke of her as a contestant or a place or even an enemy. But the old man always thought of her as feminine and as something that gave or withheld great favours, and if she did wild or wicked things it was because she could not help them. The moon affects her as it does a woman, he thought” [7, 23] || «Նրանք ծովի մասին խոսում էին որպես թե մրցակցի կամ վայրի կամ թե նույնիսկ որպես պիտյանի: Սակայն ծերունին մշտապես մտածում էր նրա՝ որպես կնոջ և ինչ-որ մի այլ բանի մասին, որ մեծ շնորհ էր պարգևում կամ մերժում, ու եթե նա վայրի կամ չար արարք էր թույլ տալիս, դա միայն այն պատճառով էր, որ ինքը ի վիճակի չէր մարդկանց օգնության գալու»: «Լուսինը հուզում է ծովին, ինչպես որ կնոջն է հուզում»,– խորհում էր նա» [1, 22-23]: Գիշերը խորհրդանիշ է ձկնորսի լուռ տառապանքի: Ինչ վերաբերում է առյուծներիին, ապա նրանք սիրո, անասելի ուժի և հպարտության, նաև գոյատևման խոստում վկաներ են՝ որպես խորհրդանիշ: Այսպես. “He only dreamed of places now and of the lions on the beach. They played like young cats in the dusk and he loved them as he loved the boy” [7, 19] || «Նա հիմա երագում էր հեռավոր վայրերի և ավերի առյուծների մասին: Նրանք խաղում էին աղջամուղջի մեջ. ասես կատվի ձագեր լինեին, ու ինքը սիրում էր նրանց, ինչպես որ տղային էր սիրում» [1, 19]: Հաջորդ խմբի մեջ է դասվում ծերունին՝ որպես լավատես մեկը, որը հույս ունի նպատակին հասնելու և պայքար է մղում դրա համար: Նա այդ նույն պայքարի մեջ ասես ձուլվում է բնությանը և նրանում ապրող էակներին՝ մշտապես զգալ տալով մարդ-արարածի կամքի ուժն ու լավատեսությունը: Այսպես “But man is not made for defeat”, he said. “A man can be destroyed but not defeated” [7, 89] || «Բայց մարդը պարտվելու համար չի ստեղծված,– ասաց նա:– Մարդուն կարելի է ոչնչացնել, բայց՝ երբեք ոչ հաղթել» [1, 76]: Ծերունու օգնական տղան՝ Մանտիլը, յուրատիպ խորհրդանիշ է հույսի, նոր բացվող լուսավոր օրվա և հաջողության: Այսպես. “I

wish I had the boy,” the old man said aloud. “I’m being towed by a fish and I’m the towing bitt” [7, 36] || «Երանի տղան հետս լինէր,- բարձրաձայն սասց ծերունին:- Չուկն ինձ բուրսիք արած քաշում է, ու ես ինքս էլ բուրսիքի գերան եմ» [1, 34]: Ծերունու մտորումների մեջ անընդհատ ներկա ԴիՄաջին խորհրդանշում է անսահման հաստատակամություն, հավատ և դիմացկունություն ամեն տեսակ ցավի դեմ: Նա անընդհատ ներշնչում է ծեր ձկնորսին՝ դիմադրելու և պայքարելու բնության ահեղ տարերքի դեմ: “But I must have confidence and I must be worthy of the Great DiMaggio who does all things perfectly even with the pain of the bone spur in his heel” [7, 57] || «Բայց ես պիտի վստահ լինեմ ուժերիս ու պիտի արժանի լինեմ Մեծն ԴիՄաջիոյին, ով ամեն ինչ հիանալի է անում, նույնիսկ երբ կրնկոսկրի կոշտուկը ցավ է տալիս» [1, 50]: Նրա համար ԴիՄաջին խորհրդանշն է անսպառ ուժի և կամքի, ու բնավ պատահական չէ, որ ծերունին իր մտորումների մեջ անընդհատ հիշում ու հիշատակում է նրան ու ինքն իրեն հարց տալիս: “Do you believe the great DiMaggio would stay with a fish as long as I will stay with this one? he thought. I am sure he would and more since he is young and strong” [7, 57-58] || «Կարծում ես Մեծն ԴիՄաջին ձուկ սավածի հետ էսքան կմնա ր, ինչքան ես քրա հետ,- մտածեց նա:- Համոզված եմ, որ էրպես էլ կաներ, կարող է ավելի երկար ժամանակով, քանի որ ջահել է ու ուժեղ» [1, 50]: Նա կարծում էր, որ վերջինս անպայման կգնահատի իր ջանքերը միայնակ ծովում պայքարելիս: “But I think the great DiMaggio would be proud of me today” [7, 83] || «Բայց կարծում եմ՝ Մեծն ԴիՄաջին էսօր ինձնով հաստատ կհպարտանար» [1, 71]: Հաջող խորհրդանիշը ծերունու հարպունն է՝ հմտություն նախանշող մի իր, որը կարևորվում է, երբ մարդ դեմ հանդիման է լինում մեծ խնդրի կամ դժվարության: Բնության և աշակերտության խորհրդանիշ է պատվի թռչունը, որը ասես փորձում է թուլացնել ծերունու պրկված նյարդերը: “The bird is a great help”, the old man said” [7, 30] || «Թռչունը մեր մեծ օգնականն է,- սասց ծերունին» [1, 29]: Ինչ վերաբերում է մեղանին, ապա նա խորհրդանշում է ծերունու անօրինակ պայքարը: “But I will show him what a man can do and what a man endures” [7, 55] || «Բայց ցույց կտամ նրան, ինչի է ընդունակ մարդը ու նաև ինչի է դիմանում» [1, 48]: Պատումի մեջ բնությունը իր բազմաբնույթ ներկայությամբ ևս խորհրդանիշ է, որին Սանտյագոն ակներևորեն մտադիր չէ սպանել, ընդհակառակը, նա խոր ակնածանք է տածում այդ անհուն տարածքի հանդեպ և միաժամանակ ցավ ապրում, որ ստիպված է դիմում որսի: Այսպես: “He was very fond of flying fish as they were his principal friends on the ocean. He was sorry for the birds, especially the small delicate dark terns that were always flying and looking and almost never finding, and he thought, “The birds have a harder life than we do except for the robber birds and the heavy strong ones” [7, 22] || «Նա շատ էր սիրում թռչող ձկներին, քանզի նրանք իր հիմնական բարեկամներն էին օվկիանի վրա: Նա խղճում էր թռչուններին, հատկապես պատվի ու նուրբ թուխ ծիծառներին, որոնք շարունակ թռչում էին ու կեր փնտրում և գրեթե երբեք էլ չէին գտնում, ու նա մտածեց. «Թռչուններն ավելի ծանր կյանք ունեն, քան մենք, թեթե չհաշվենք գիշանգղերին և ավելի ծանրաթև, ուժեղ հավքերին»» [1, 22]: Չուկը ծերունու համար էական իմաստ ունի, ու նա խոր արհուսանք է ապրում, որ ստիպված է նրան սպանել: “Fish,” he said, “I love you and respect you very much. But I will kill you dead before this day ends” [7, 45] || «Մ՛յ ձուկ,- սասց նա,- շատ եմ սիրում քեզ ու հարգում: Բայց դե սպանելու եմ քեզ, մինչև օրը վերջանա» [1, 40]: Անշուշտ, մեծ է նրա խանդադատանքը ամենայն շնչավորի նկատմամբ, այսպես: “He loved green turtles and hawks-bills with their elegance and speed and their great value...” [7, 29] || «Նա սիրում էր կանաչ կրիաներին և ճուռակներին նրանց նրբագեղության ու սրնթթացության, նաև թանկ գնահատվելու համար...» [1, 27]: Ծերունուն նաև սփոփում է հույսը, որ մարդիկ աստղերին չեն հասել՝ ոչնչացնելու: “I am glad we do not have to try to kill the stars”.[7, 63] || «Ուրախ եմ,

որ ստիպված չենք փորձ անել սպանելու աստղերին» [1, 55]: Այնուհետև նա մտահոգ ավելացնում է. “I do not understand these things, he thought. But it is good that we do not have to try to kill the sun or the moon or the stars. It is enough to live on the sea and kill our true brothers” [7, 64] || «Էս բաներից ես գուրչա չեմ համում,- մտածեց նա:- Բայց դե լավ է, որ ստիպված չենք լինում սպանել արևին կամ լուսնին կամ էլ աստղերին: Մեզ լրիվ հերիք է, որ ծովի վրա ենք ու սպանում ենք մեր իսկ իսկական եղբայրներին» [1, 56]: Նմանօրինակ մեկ այլ միտք, որը հստակ փոխաբերություն է, հրաշալի համեմատություն-պատկեր. “I am clear enough in the head, he thought. Too clear. I am as clear as the stars that are my brothers. Still I must sleep. They sleep and the moon and the sun and even the ocean sleeps sometimes on certain days when there is no current and a flat calm” [7, 66] || «Գլուխս լրիվ պայծառ է,- մտածեց նա:- «Չափից դուրս: Էնքան պայծառ, ինչքան որ աստղերը, որ իմ եղբայրներն են: Բայց և այնպես պիտի քնեմ: Աստղերը քնում են, լուսինն ու արևը քնում են, ու նույնիսկ օվկիանոսն է երբեմն քնում էն օրերին, երբ հոսանք չկա, ու լրիվ հանգիստ է տիրում» [1, 57]: Ծերունին նաև հիացական քնքշանք է գգում քամու նկատմամբ, որը ևս բնության անբաժան մասնիկն է. “The wind is our friend, anyway, he thought. And the great sea with our friends and our enemies” [7, 104] || «Քամին, համենայն դեպս, մեր բարեկամն է,- մտածեց նա: Ապա և ավելացրեց՝ երբեմն: Եվ հսկա ծովը լի է մեր ընկերներով ու թշնամիներով» [1, 87-88]: Սանտյագոյի և բնության սրտատուչ փոխկապվածությունը՝ որպես նախաստեղծի և նրան սերտորեն շողկապվածի հավերժական իրողություն, հարգանք և պատկառանք է հիշեցնում: Ծերունին խոսում է ծովում ապրող բոլոր արարածների հետ մեծ սիրով ու նաև երկյուղածությամբ, ու ասես այդ մենախոսությունը յուրօրինակ երկխոսություն-ուղերձ է բոլորին՝ բարին անպայման ավետելու: Այսպես. “Stay at my house if you like, bird,” he said. “I am sorry I cannot hoist the sail and take you in with the small breeze that is rising. But I am with a friend.” [7, 46] || «Մնա ինձ մոտ, էթե ուզում ես, թռչնակ,- ասաց նա:- Ցավում եմ, որ չեմ կարող առագաստը բարձրացնել ու տանել քեզ ես բարձրացող թեթև քամու հետ: Բայց դե էստեղ ես բարեկամի հետ եմ» [1, 41]: Իսկ նրա սերն ու ափսոսանքը միաժամանակ ձկան նկատմամբ երևում են հետևյալ տողում. “You’re feeling it now fish,” he said. “And so, God knows, I am” [7, 46] || «Համա՛ թե ցավ ես հիմի գգում, ա՛յ ձուկ,- ասաց նա:- Ու Աստված գիտի միայն, որ ես էլ եմ էդ օրին» [1, 41]: Երկար ձգվող օրերի իր պայքարի ընթացքին ծերունին ցավատանջ խոսում է նաև իր արդեն փայտացած ձեռքերի հետ՝ բայց և իրեն անընդհատ հուսադրելով. մի բան, որ, հիրավի, խոսում է նրա անսպառ տոկոսության մասին. “How do you feel, hand?” he asked the cramped hand that was almost as stiff as rigor mortis. I’ll eat some more for you” [7, 49] || «Ո՛նց ես, ա՛յ ձեռք,- հարցրեց նա ընդարձացած ձեռքին, որը գրեթե այնքան քարացած էր, որքան մեռյալինը:- Հանուն քեզ մի կտոր էլ կուտեմ» [1, 43]: Կամ մեկ այլ դեպքում. “Be patient, hand,” he said. “I do this for you” [7, 49] || «Համբերի՛ր, ա՛յ ձեռք,- ասաց նա:- Էս քեզ համար եմ անում» [1, 44]: Հետևյալ տողը ևս տոկոսության վկայությունն է. “He was comfortable but suffering, although he did not admit the suffering at all” [7, 54] || «Նա հանգիստ էր արդեն, բայց և տառապում էր տանջող ցավից, թեև այդ նույն ցավը բնավ չէր էլ ընդունում» [1, 47]: Նմանատիպ մեկ այլ տող. “Although it is unjust, he thought. But I will show him what a man can do and what a man endures” [7, 55] || «Չնայած որ էլ անարդար է,- մտածեց նա:- Բայց ցույց կտամ նրան՝ ինչի է ընդունակ մարդը ու նաև ինչի է դիմանում» [1, 48]: Իր տառապանքի և ցավի մեջ նա փորձում է ամուր մնալ. “And pain does not matter to a man” [7, 72] || «Իսկ ցավն էլ տղամարդու համար հեշ բան է» [1, 62]: Նա կարծես իր անվերջ տառապանքի մեջ անընդհատ փորձում է սովոր, և դա վկայություն է հզոր կամքի ուժի. “It is silly not to hope, he thought. Besides I believe it is a sin” [7, 90] || «Հիմարություն է հույսը կորցնելը,- մտածեց նա:- Բացի էլ էլ՝

կարծեմ թե էդ անելը մեղք է» [1, 77]: Մեկ այլ տեղ նա, իր ցավը փորձելով մոռանալ, մտածում է վիրավոր ձկան ցավի մասին. “I must hold his pain where it is, he thought. Mine does not matter. I can control mine. But his pain could drive him mad” [7, 71] || «Չպիտի ցավեցնեմ նրան, որ մատում է լինի.– մտածեց նա.– Իմ ցավը կարևոր չի: Իմը հեշ, կարող եմ տանել: Իսկ ա՛յ, նրա ցավը կարող է գծվեցնել իրեն» [1, 64]: Պատումի վերջում ծերունին հոգեկան ցավ ու խոր ափսոսանք է ապրում ծվատված ձկան համար: Ահա մի տխուր պատկեր. “Half-fish,” he said. “Fish that you were. I am sorry that I went too far out. I ruined us both. But we have killed many sharks, you and I, and ruined many others” [7, 99] || «Ա՛յ կիսաձուկ.– ասաց նա.– Ա՛յ նախկին ձուկ: Ցավում եմ, որ էսքան հեռու գնացի ծովում: Կործանեցի երկուսիս էլ: Բայց երկուսով ահագին շնաձուկ սպանեցինք՝ դու ու ես, ու շատերին էլ խորտակեցինք» [1, 84]: Իր խոր մտորումների մեջ ծերունու հուշերում կրկին հառնում է պատանուլթյան օրերի երազանք-աղյուծների պատկերը. “I wish he’d sleep and I could sleep and dream about the lions, he thought. Why are the lions the main thing that is left?” [7, 56] || «Երանի նա քներ ու ես էլ քնեի ու երազումս աղյուծներ տեսնեի.– մտածեց նա.– Ինչի՞ եմ աղյուծները միակ բանը մնացել իմ հիշերու» [1, 49]: Վիպակի ողջ տարածքում կարմիր թելի նման ձգվում է բնության նկատմամբ սիրո և միևնույն ժամանակ ափսոսանքի գաղափարը: Ահավասիկ. “I wish I could feed the fish, he thought. He is my brother. But I must kill him and keep strong to do it” [7, 49] || «Երանի՛ կարողանայի ձկանն էլ կերակրել.– մտածեց նա.– Չէ՞ որ նա իմ եղբայրն է: Բայց պիտի սպանեմ նրան, ու դրա համար ուժ է հարկավոր» [1, 44]: Միևնույն ժամանակ ծերունուն պատում է միայնության թախիծն ու հուսադրումը. “He looked across the sea and knew how alone he was now”. [7, 50] ...and he knew no man was ever alone on the sea” [7, 51] || «Նա հայացքը հառեց հեռուներին ու հասկացավ, թե հիմա ինքը որքան է միայնակ: ...ու հասկացավ, որ ոչ մի մարդ-արարած երկրիս երեսին ծովի վրա միայնակ չի լինում երբևէ» [1, 44-45]: Օտրունու անօրինակ ուժի և կորովի, նաև բնության մասնիկ ձկան ուժի վկայություն է հետևյալ տողախումը. “He is a great fish and I must convince him, he thought. I must never let him learn his strength nor what he could do if he made his run. If I were him I would put in everything now and go until something broke. But, thank God, they are not as intelligent as we who kill them; although they are more noble and more able” [7, 53] || «Հսկա ձուկ է սա, ու պիտի համոզեմ նրան իմ հարցում.– մտածում էր նա.– Բոլորովին չպիտի թողնեմ, որ գիտակցի իր սեփական ուժը, ոչ էլ գլխի ընկնի, թե ինչ կարող է անել, եթե փախչի հանկարծ: Թե նրա տեղը լինեի, ամեն բան կթողնեի հիմի ու էնքան կհեռանայի, մինչև որ մի բան պայթեր: Բայց դե, փառք Աստծո, ձկներն էնքան խելացի չեն, ինչքան մենք, որ սպանում ենք նրանց, չնայած որ նրանք ավելի վեհանձն են ու ավելի կարողունակ» [1, 46]: Վիպակում խաղաղ բնության անկապտելի մասնիկ ձկան վրա հարձակում գործած շնաձկները անկասկած խորհրդանիշն են ավեր-կործանման ամենայն լավ բանի, որը անասելի ցավ է պատճառում ծերունուն, քանզի նա ձկներին իր հարազատն է համարում: Այսպես. “When the old man saw him coming he knew that this was a shark that had no fear at all and would do exactly what he wished” [7, 86-87] || «Երբ ծերունին տեսավ նրան առաջ գալիս, հասկացավ, որ սա այնպիսի մեկն է, որ բնավ վախ չունի և կանի այն, ինչ սիրտը կուզի» [1, 74]: Հաջորդ տողում նա զգում է խոր ափսոսանք ու ցավ ձկան նկատմամբ. “When the fish had been hit it was as though he himself were hit” [7, 88] || «Երբ շնաձուկը հարձակվեց ձկան վրա, ասես թե անձամբ իրեն հարվածեց» [1, 75]: Այնուհետ ծերունին մտորում է մարդու մեղքի և հպարտության մասին. “You did not kill the fish only to keep alive and to sell for food, he thought. You killed him for pride and because you are a fisherman. You loved him when he was alive and you loved him after. If you love him, it is not a sin to kill him. Or is it more?” [7, 91] || «Դու ձկանը չսպանեցիր միայն կենդանի մնալու

և նրան ուրիշների վրա ծախելու համար,– մտածում էր նա:– Դու նրան սպանեցիր հպարտությունից ու որովհետև ձկնորս ես: Դու սիրում էիր նրան, երբ կենդանի էր, ու դրանից հետո էլ էիր սիրում: Բակ էթե սիրում ես՝ մեղք չէ նրան սպանելը: Կամ կարող է ավելի մեծ մեղք է» [1, 77]: Շնամկնների ներկայությունը տեքստում, «այսբերգյան սկզբունքի» համաձայն (այն է՝ տես սատելիքի խորքը), կարելի է դիտարկել որպես «տխուր խորհրդանիշ», որով հեղինակը, կարծում ենք, ներքուստ մտադրություն է ունեցել ընթերցողի ուշադրությունը բևեռելու շնամուկ-դաժան-անհատակուլ հասարակություն եռամիասնություն վրա: Մա, ինչ խոսք, կարելի է նաև ընկալել որպես մի ուղերձ՝ հասցեագիր բոլորին, որ հարկ է պահպանել ամենայն աստղատես-լուսավոր բան երկրի երեսին, որը հենց կոչված է իմաստավորելու հավերժը տիեզերականի ծիրի մեջ: Եվ պատումի ավարտը ևս ինքնին խորհրդանշական պատկեր է՝ խոնջացած ծերունու երազի մեջ անցնող հպարտ առյուծների տեսքով. “Up the road, in his shack, the old man was sleeping again. He was still sleeping on his face and the boy was sitting by him watching him. The old man was dreaming about the lions” [7, 109] || «Ճանապարհից վեր՝ իր խրճիթում, ծերունին քնած էր կրկին: Նա դեռ քնած էր երեսն ի վայր, իսկ տղան կողքին նստած հսկում էր նրան: Ծերունին երազի մեջ այն նույն առյուծներն էր տեսնում» [1, 93]:

Էռնեստ Հեմինգուեյի ոճը հստակ է, համոզիչ, կանխամտածված հակիրճ և նրբանկատ՝ հենված «այսբերգյան տեսություն» սկզբունքի վրա: Այս գրական հնարքը ամերիկյան գրականության ակնառու իրապաշտ գրող Էռնեստ Հեմինգուեյի ներդրմամբ արտացոլում է հեղինակի անհատական մոտեցումը գեղարվեստական տեքստին: Այն արտացոլում է գրողի գեղագիտական դիրքորոշումը, որին նա անդրադարձել է իր ստեղծագործական կյանքի տարբեր փուլերում: Կարճ պատումի ժանրում հանդես եկող գրողը նվազագույնական (մինի-մալիստական) մոտեցմամբ գործածում է այս գրական միջոցը՝ որպես տեքստ-ենթատեքստ, ինչու չէ՝ նաև համատեքստ հարաբերության բացահայտման հիմնական մոտեցում՝ մի բան, որ գերազանցապես բնորոշ է նրա գրեթե բոլոր գործերին, մասնավորապես՝ մեր խնդրո առարկա «Ծերունին և ծովը» վիպակին: Այստեղ գործող լեզուն բանաստեղծական, նաև երաժշտական հնչերանգ ունի, որը յուրօրինակ գունավորում է հաղորդում հեղինակային խոսքին: Այս ստեղծագործությունը ժամանակին մեծ արձագանք է գտել և դեռ շարունակում է գտնել մեզանում՝ որպես ապացույց այն մեծ հետաքրքրության, որը մշտապես արթուն է պահում երկրպագուների սերը և հիացմունքը առ գրողի տաղանդը: Բնավ պատահական չէ, որ հեղինակի գրչընկերները, որոշ քննադատական խոսքին զուգընթաց, հիմնականում խոր հարգանքով են խոսել այդ դարակազմիկ գործի մասին: Անավասիկ մեկ այլ հանրահայտ հեղինակի արձագանքը «Ծերունին և ծովը» վիպակի առնչությամբ. «Այս անգամ նա գրում է ինչ-որ տեղ, ինչ-որ բանի մասին, որը ամբողջացնում է ամենայն բան. ծերունին, որ ստիպված էր ձուկ բռնել ու հետո բաց թողնել-կորցնել այն, որը և ստիպված էր բռնվել, ու հետո էլ շնամկները, որոնք պիտի խլեին ծերունու բռնածը, էղպեղ, էղպեղ և դարձրել նա բոլորը ու սիրել է բոլորին ու խղճացել էր բոլորին: Շատ լավ է» [5]: Էռնեստ Հեմինգուեյի գործածած լեզուն բնական է՝ գերծ ավելորդ հուզական երանցից, այն հատկանշական է բազմատեսակ ոճական հնարների, պարադոքսների, «գիտակցական հոսքի» և հակասությունների առկայությամբ: Գրողը իր գործերի պլոտեն, հիմնական ասելիքը ներկայացնում է պատումի «ձայնով», զանազան ոճերով, խորհրդանիշներով և անձնավորումներով: Այդ ամենի ապացույցն է հեղինակի հիշյալ վիպակը՝ որպես մի ձոն մարդու կյանքի ուժի, հավատի և բնության նկատմամբ ունեցած անափ սիրո: Գրողի ստեղծագործության իրական բնույթն այն է, որ նա իր ողջ գործունեության ընթացքում փորձ է արել վերստեղծել ճշգրիտ ֆիզիկական զգացողություններ՝ իրականում բողարկելով գեղագիտական զգացողության նրբու-

թունը [2]: Մեր երկլեզվյան քննության ծիրում ներհայեցական մոտեցումով ենք փորձել առնչվել գեղարվեստական թարգմանությանը և նրա առաջին կարևորության խնդրին՝ համարժեքությանը: Մեր խորին համոզմամբ գեղարվեստական թարգմանությունը հարկ է դիտարկել բացառապես որպես ստեղծագործական ընթացքի արտահայտություն՝ կատարված բնագիր տեքստի հեղինակի շահերի պաշտպան թարգմանչի կողմից: Ուստի այդօրինակ մեկնումի սկզբունքը, մեր համոզմամբ, բանաստեղծական-հաղորդակցական գործառույթի ակնհայտ գերակայությունն է: Մեր աշխատության մեջ շոշափել ենք գեղարվեստական թարգմանության մեկ այլ ոչ պակաս կարևոր գործառույթ, այն է՝ գեղագիտականը: Թարգմանության մասին ուշագրավ դիտարկում է արել Օկտավիո Պասը՝ նշելով. «Գրականությունը և թարգմանությունը հոմանիշ են: Թարգմանությունը մշտապես գրական ստեղծագործություն է, այն գեղարվեստական կամ գիտական գործ է: Թարգմանությունները գեղարվեստական ակտեր են, որոնցում գործադրում ենք մեր ողջ գրական-գեղարվեստական իմացությունը» [11]: Հեմինգուեյ-գրողի ստեղծած «այսբերգի տեսություն» գրական հնարը ընդհանուր առմամբ ոչ այլ ինչ է, քան տեքստ-ենթատեքստ հարաբերակցություն, որում խիստ կարևորվում է հատկապես ասելիքի խորքը, այն է՝ ենթատեքստը, և ինչպես Դեյվիս Քեյթլնն է նշում. «... բոլոր տեքստերը պետք է դիտարկվեն ենթատեքստի շրջանակներում» [8]: Գեղարվեստական թարգմանության գլխավոր խնդիրը հնարավորինս ճշգրիտ համարժեք գտնելն է՝ մի բան, որ շեշտում է թարգմանչի մշակութային իմացության մակարդակը [4]: Թարգմանչի մասին հետաքրքիր մոտեցում է դրսևորել նաև Փիթեր Նյումարքը՝ նշելով. «Գեղարվեստական թարգմանիչը ընդհանուր առմամբ հարգանք է տալով լավագույն գրության հանդեպ՝ նկատի առնելով տեքստի լեզուն, կառույցները, ենթատեքստը, բնույթը» [10]: Մեր քննության ընթացքում հատվածաբար կատարել ենք նաև տեսական արծարծումներ, որոնք անհատական մոտեցման դրսևորումներ կարող են ընկալվել: Մեր հետաքրքրության ծիրում միշտ եղել են նաև Էռնեստ Հեմինգուեյի կիրառած երկխոսությունները, որոնք յուրովի ինքնախոսություն են հիշեցնում՝ մի բան, որ շատ հաճախ ներկայ է ոչ միայն նրա կարճ պատմվածքներում, այլև վեպերում և, անշուշտ, «Օերունին և ծովը» վիպակում: Հրավի հիշարժան է Է. Հելլիդեյի դիտարկումը այդ առնչությամբ. «Հեմինգուեյը իրապաշտ է, որի փայլուն հավատարմությունը կյանքի նկատելի կողմերին կատարվում է կենդանի երկխոսությունների միջոցով» [6]: Գրողի խորին համոզմամբ անհատական ոճը պետք է լինի պարզ ու հակիրճ, պատկերը՝ հարուստ, երկրային, բառերը՝ հասարակ և հուժկու: Այստեղ տեղին է հիշատակել Հերրի Լևինի դիտարկումը, ըստ որի. «Հեմինգուեյը հատուկ շեշտադրում է անում գոյականների վրա՝ գտնելով, որ խոսքի մասերի մեջ դրանք առավել մերձ են իրերին» [9]: «Օերունին և ծովը» պատումը ունի կուռ կառուցվածք՝ լի բազմախոս ոճական միջոցներով և բազմա-տարաբնույթ խորհրդանիշներով, որոնք ասես ձուլված են իրար՝ խոսուն պատկերաձևերով, և դրանք, հիրավի, կազմում են պատումի հուզաբնարական հենքը: Է. Հեմինգուեյի գեղագիտության մեջ առկա պատկեր-խորհրդանիշ մանրամասները երկու կողմ ունեն իրական և խորհրդանշական, և բնավ էլ պատահական չէ, որ այս մոտեցումը բնորոշ է բացառապես նրա բոլոր գործերին: Նրա գործադրած ոճական միջոց-խորհրդանիշները ոչ այլ ինչ են, եթե ոչ յուրօրինակ ակնարկներ, որոնց ընկալումը ևս օգնում է մեզ հասնելու անհրաժեշտ միտք-գաղափարին՝ ճշգրիտ շեշտադրում առնելով հիմնականին և առավել կարևորված մանրամասներին [3]:

Մեր քննության տարածքում այս ամենը փորձել ենք դիտարկել բնագրա-թարգմանական-մեկնական օրինակների համարժեքային համադրությամբ:

Եզրակացություն

Մանրագին քննության արձեղծվ էրնեստ Հեմինգուեյի «Ծերունին և ծովը» պատումը պատկերավորման միջոց-խորհրդանիշների բացահայտման տեսանկյունից՝ պարզել ենք, որ այն կատարված է «Այսբերգյան տեսության» և նվազագույնական մոտեցմամբ՝ շեշտադրում անելով տեքստ-ենթատեքստ հարաբերակցությանը: Գրողը իր պատումներում առանձնապես տեղ չի տալիս ասելիքի մանրամասներին՝ առավելապես գործածելով պարզ, հակիրճ խոսք՝ պատված խոհափիլիսոփայական մտորումներով: Գեղարվեստական տեքստի հեղինակը խորհրդանիշներ է օգտագործում, որպեսզի առավել տպավորիչ, նաև հուզական դարձնի իր հիմնական ասելիքը: Խորհրդանիշները՝ որպես պատկերավորման միջոցներ, լայնորեն տարածված են վիպական՝ առավել շարժուն դարձնելով պատումի խորքային ընթացքը: Ուսումնասիրությունը գուզահեռված է հեղինակի տեքստին համահունչ համարժեքային թարգմանությամբ, որը բնագրից կատարել է առաջին անգամ տղերիս հեղինակը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-59>

Գրականության և աղբյուրների ցանկ

1. Հեմինգուեյ է., Ծերունին և ծովը (թարգմանությունը՝ Նինա Ա. Ջաղինյանի), Վանաձոր, «ՄԻՄ» տպագրատուն, 2016:
2. Ջաղինյան Ն., Էրնեստ Հեմինգուեյի անհատական ոճի առանձնահատկությունները // Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պրակ Ա, Երևան, «Միսմա» ՍՊԸ, 2018:
3. Ջաղինյան Ն., Էրնեստ Հեմինգուեյի «Կատուն անձրևի տակ» կարճ պատմվածքի ոճական քննություն // Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր 2, Երևան, «Քոփի Փրինտ» ՍՊԸ, 2022:
4. Ջաղինյան Ն., Մտածումներ գեղարվեստական թարգմանության և թարգմանչի դերի շուրջ // Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, «Միսմա» ՍՊԸ, 2019:
5. Faulkner William. Review of *The Old Man and the Sea*, Shenandoah III, 1952.
6. Halliday E. M. *Hemingway's Ambiguity: Symbolism and Irony*. American Literature, 1956.
7. Hemingway Ernest. *The Old Man and the Sea*, Front Cover Shows, Spencer Tracy, Warner Bros. Production of *The Old Man and the Sea*, The Cinema Bookshop, 1958.
8. Katan David. *Translating Cultures*, Routledge, London, New York, 2004.
9. Levin Harry, *Observations on the Style of Ernest Hemingway*, Front Cover, 1961. <https://books.google.com/books>.
10. Newmark Peter. *A Textbook of Translation*, Prentice-Hall International, USA, 1988.
11. Paz O. *Contemporary Theories on Translation*, Translation Blog, 2009.

Наличие символов в романе Эрнеста Хемингуэя «Старик и море» (сравнительно-интроспективный анализ)

Нина Джагинян

Резюме

Ключевые слова: *выразительное средство, «теория айсберга», индивидуальный стиль автора, переводческая эквивалентность, рыбак, природа, марлин, акула*

Эрнест Хемингуэй, выдающийся представитель американской литературы, один из известных деятелей реалистической прозы, перу которого свойственен лаконичный, глубокий по содержанию стиль с минималистической формулировкой. Язык автора примечателен естественностью, непосредственностью и композиционной ясностью. Слово – это то, что хочет передать автор, имеет глубокий смысл, основанный на созданном им литературном приеме, «теории-принципе айсберга», который на самом деле представляет собой соотношение текста и подтекста и полностью соответствует индивидуально-эстетическому подходу Э. Хемингуэя. Основная цель данного исследования – выявить символы в произведении автора «Старик и море» путем сравнительного и самонаблюдательного (интроспективного) анализа, что было реализовано на основе сделанных нами переводных примеров. Символы, являющиеся предметом нашего исследования, свободно используются в повести в качестве общих, индивидуальных, эмоциональных образов, которые делают слова автора более глубокими и звучными. Выбранный в тексте каждый образ-символ имеет какой-то точный/ясный смысл и все это свидетельствует о высоком эстетическом вкусе Э. Хемингуэя и глубоком философском мышлении писателя-реалиста. Все символы, присутствующие в романе, говорят также об остром зрительном восприятии автора, безграничной любви к живой природе и величайшей силе человеческой воли.

The Presence of Symbols in Ernest Hemingway’s “The Old Man and the Sea” (Comparative-introspective Analysis)

Nina Jaghinyan

Summary

Key words: *expressive means, “iceberg theory”, individual style of the author, translation equivalence, fisherman, nature, marlin, shark*

Ernest Hemingway, a prominent representative of American literature, is one of the distinguished figures of realistic prose, whose language style is characterized by a short, deep content with a minimalistic formulation. The author’s language stands out for its naturalness, directness and compositional clarity. The writer’s subject matter is profound, based on the literary technique he created. It is “The iceberg theory-principle”: a text-context relationship which is completely in harmony with the author’s individual-aesthetic approach. The main purpose of this study is to find out the symbols in the author’s novella “The old man and the sea” through a comparative and introspective analysis, which has been done on the base of the translated examples. The symbols observed as general, individual, emotional expressions, are freely used in the novella. They make the author’s speech more profound and resonant. Each image-symbol chosen in the text has a specific meaning and all of it speaks of the high aesthetic taste and deep philosophical thinking of realist writer Hemingway. All the symbols of the novella also speak of the author’s intense imagination, boundless love for living nature and the greatest human willpower.

Ներկայացվել է 09.01.2024 թ.
Գրախոսվել է 06.02.2024 թ.
Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.